



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՅՈՒՆԻՍԻՆ, 2016

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՐՄՈՍ 36

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

**Տ**էր, քու սէրդ երկիւնքին պէս անսահման է.  
հաւատարմութիւնդ՝ մինչեւ ամպերը կը հասնի:  
Արդարութիւնդ լեռներուն պէս բարձր է,  
դատաստաններդ՝ ովկիանոսներուն պէս խորունկ:  
Դուն է որ կը հոգաս մարդոց թէ անասուններուն կարիքները, Տէր:  
Կնչ թանկագին է հոգածութիւնդ, ով Աստուած.  
բոլոր մարդիկ քու թելերուդ հովանիին կ'ապաւինին:  
Քու տանարիդ առատ օրհնութիւններով կը լիացնես զանոնք,  
շնորհներու քու գետէդ խմել կու տաս դուն անոնց:  
Որովհետեւ դուն ես կեանքի աղբիւրը.  
լոյսովդ է որ մենք լոյսը կը տեսնենք:  
Մշտական ըրէ հոգածութիւնդ անոնց վրայ՝  
որոնք քեզ կը նանչնան,  
եւ արդարութիւնդ անոնց վրայ՝ որոնք սրտով ուղիղ են:

### ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուրք Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 4:14-21)



## ՊՕՂՈՍԻ ՀԱՅՐԱԿԱՆ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ (4:14-21)

Հերաբրբրականօրէն, այս հապուածով Պօղոս Առաքեալ իր ոճը կը մեղմացնէ, որոշ խստութենէ յետոյ: Ան նաեւ կը յիշեցնէ թէ ինչու այս խիստ ոճը, «**ոչ թէ զիրենք ամօթով ձգելու, այլ զիրենք խրապելու, որպէս սիրելի զաւակներ**» (14 հմր): Ինչպէս մէկ այլ ուրիշ փեղ Առաքեալը նոյնը պիտի ըսէ այս անգամ Աստուծոյ վերագրելով, «Համբերութեամբ ընդունեցէք Աստուծոյ խրապը, զիպնալով որ հօր մը պէս կը վարուի ձեզի հետ: Որովհետեւ Տէրը երբ կը խրապէ՛ կը նշանակէ թէ կը սիրէ ձեզ» (Եբր 12:5-8):

Կորնթացիները շատ մը դաստիարակներ ունէին, որոնք Պօղոս Առաքեալէ յետոյ եկան եւ գործեցին, քարոզեցին, դաստիարակեցին Կորնթացիներուն, ոմանք ալ, սակայն, պարճառ եղան ներքին պառակարմներու: Ու մանաւանդ, մարդիկ որոնք պայքար կը մղէին Պօղոսի առաքելական իշխանութեան ու հայրական հեղինակութեան դէմ: Ահա Պօղոս Առաքեալ կը յիշեցնէ, «**եթէ նոյնիսկ շատ մը դաստիարակներ ունենաք, ձեզ Քրիստոսի առաջնորդելու համար, բայց ինձմէ զատ հայր չէք կրնար ունենալ, որովհետեւ ես էի որ Աւետարանին քարոզութեամբ ձեզի հայր եղայ, որպէսզի Քրիստոսի պարկանիք**» (15 հմր):

Ուստի խնդրելով կը խնդրէ, մեղմութեամբ, որ իրեն նմանին, իբրեւ հոգեւոր հայր: Հոգեւոր հօրմէն կը պահանջուի պարասխանաբարութիւն, որպէսզի իր կեանքով օրինակ ծառայէ իր հոգեւոր զաւակներուն: Այնպէս ինչպէս մարմնաւոր ծնողներու պարագային պիտի ուզէին, փափաքէին, որ իրենց զաւակները իրենց նմանին: Անոր համար ալ յաճախ կ'ափսոսանք, կը նեղուինք երբ մեր զաւակները սխալ ուղղութեամբ երթալով չեն նմանին իրենց ծնողներուն: Նոյնպէս ալ հոգեւոր իմաստով Պօղոս Առաքեալ կը խնդրէ որ իր կեանքի օրինակին հետեւին: Իբրեւ փեսանելի օրինակ իրենց կը դրկէ Տիմոթէոսը, «**իրեն հաւատարիմ ու սիրելի որդիս, որպէսզի ձեզ յիշեցնէ իմ սորվեցուցած սկզբունքներս, որոնք պէք է ըլլան Քրիստոսի պարկանողներուն, ինչպէս ամէն փեղ կը սորվեցնեն**» (17 հմր): Ուրեմն, կը նշանակէ ինչ որ Պօղոս սորվեցուցած էր արդէն կարծէք մոռցեր էին, անոր համար ալ Տիմոթէոսը պիտի գայ որպէսզի յիշեցնէ, որովհետեւ Տիմոթէոսն ալ կը հետեւի նոյն սկզբունքներուն, ինչպէս միւս բոլոր եկեղեցիները: Քրիստոսի պարկանողները նոյն եւ մէկ սկզբունք ունին եւ պէք է ունենան, եւ ոչ թէ փարբեր փարբեր շրջաններ, եկեղեցիներ փարբեր սկզբունք: Ինչ են այդ սկզբունքները: Քրիստոսի նմանելու սկզբունքը, խոնարհութեան, հեզութեան, սիրոյ, հնազանդութեան, հաւատարմութեան:

Որովհետեւ, «**ձեզմէ ոմանք սկսելը են գոռոզանալ**» (18 հմր): Ահա Առաքեալը նկատի ունի այն մարդիկը, որ սկսած էին զինք քննադատել, անոր հեղինակութիւնը, առաքելական իշխանութիւնը: Նաեւ անոնք սկսած էին գոռոզանալ իրենց ունեցած, չունեցած կարողութիւններով, եւ իրենք զիրենք իբրեւ առաքեալ ներկայացնելով, նուազացնելով Պօղոսի առաքելական պաշտօնն ու գործունէութիւնը: Հակառակ անոր, որ այս նամակին մէջ Պօղոս համբերութեամբ եւ հեզութեամբ կը խօսի անոնց մասին, մինչդեռ միւս նամակին մէջ ընդվզումով պիտի անդրադառնայ նշալով նաեւ իր առաւելութիւնները:

Ուստի պիտի գայ փեսնելու համար այդ մարդոց զօրութիւնը: Այս պարագային զօրութիւն ըսելով կը հասկնայ անոր կարարած աշխարանքին արդիւնքը, որովհետեւ վերջ ի վերջոյ ինչ որ ալ կարարած են կամ կը կարարեն, խորքին մէջ իրենց զօրութեամբ չէ, այլ Սուրբ Հոգիին ներգործութեամբը, ինչպէս ինք պիտի յիշէր այս նամակին առաջին իսկ փողերուն մէջ: Պօղոսի բացատրութեամբ Աստուծոյ արքայութիւնը «**խօսքով չէ, որ ինքզինք կը յայտնէ մարդոց կեանքին մէջ, այլ՝ գործով**» (20 հմր): Աստուծոյ արքայութիւնը Աստուծոյ փրկապարտութիւնն իսկ է մարդոց կեանքին մէջ, Անոր կամքին ներկայութիւնը եւ մարդուս ամբողջական հնազանդութիւնը Անոր: Արիկա մարդուն մէջ կը յայտնուի մարդուն իսկական նորոգութեամբը, նոր արարած դառնալով, նոր մտածելակերպով, ինչ որ փարբեր է այս աշխարհի մտածելակերպէն, եւ որուն յարուկ են Աստուծոյ Հոգիին պարգեւած զօրութիւնը եւ գործերը, որոնք ուրիշ բան չեն եթէ ոչ Սուրբ Հոգիի շնորհներուն արտացոլացումը, փոխանակ խօսք ըլլալու, այլ կեանքի կերպարանափոխում:

Ի վերջոյ, Առաքեալը կը նախընտրէ փոխանակ զաւագանով զալու, որ ուրիշ բան չէ եթէ ոչ խստութիւնը, յանդիմանութիւն, ընդհակառակը՝ Քրիստոսի սիրով, հեզութեամբ ու քաղցրութեամբ զալու, որպէսզի փոխեն իրենց ընթացքը:

Այս բոլորը ինչու այսքան մանրամասնութեամբ անդրադառնալու, որպէսզի Եկեղեցւոյ մէջ հակառակութիւններ չըլլան, որովհետեւ հակառակութիւնը աճելով պիտի յանգի հերձուածութեան, հերձուածութիւնը՝ հերետիկոսութեան, հերետիկոսութիւնը՝ եկեղեցւոյ քայքայման: